

Եվրոպայի «Փոքր բիզնեսի ակտը» և ՀՀ -ի ՓՄՁ զարգացման միտումները

ՀՏԴ 339.9(4+479.25)

Թորոսյան Թորոս Շ.

*ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերություններ ամբիոնի պրոֆեսոր, տ. գ. դ. (Երևան, ՀՀ)
tstoros@yahoo.com*

Մարգարյան Էլիզա Հ.

*ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերություններ ամբիոնի ասպիրանտ (Երևան, ՀՀ)
elizmarkaryan18@mail.ru*

Հանգուցաբառեր` Փոքր և միջին ձեռնարկություններ (ՓՄՁ), Եվրոպայի «Փոքր Բիզնեսի Ակտ», միջազգային ինդեքսներ, մրցունակություն, Արևելյան գործընկերություն

Европейский Акт о малом бизнесе и тенденции развития МСП в Армении

Торосян Торос Ш.

*Профессор кафедры экономики и международных экономических отношений, ЕГУ, д.э.н. (Ереван, РА)
tstoros@yahoo.com*

Маргарян Элиза О.

*Аспирант кафедры экономики и международных экономических отношений, ЕГУ (Ереван, РА)
elizmarkaryan18@mail.ru*

Аннотация: Данная научная статья посвящена изучению Европейского Акта о малом бизнесе, роли МСП в экономике Армении, а также вызовам их развития.

Ключевые слова: Малое и среднее предпринимательство (МСП), Европейский акт о малом бизнесе, Международный индекс, конкурентоспособность, Восточное партнерство

European Small Business Act & SME Development Trends in Armenia

Torosyan Toros Sh.

*Professor of the Chair of Economics and International Economic Relations, YSU, DSc(Econ) (Yerevan, RA)
tstoros@yahoo.com*

Margaryan Eliza H.

*PhD student of the Chair of Economics and International Economic Relations, YSU (Yerevan, RA)
elizmarkaryan18@mail.ru*

Abstract: This scientific article is devoted to the study of the European Small Business Act, the role of SMEs in the Armenian economy, as well as the challenges of their development.

Keywords: Small and Medium Enterprises (SME), European Small Business Act, International Indexes, Competitiveness, Eastern Partnership

Ցանկացած երկրի տնտեսական սոցիալական կայունության հիմնական երաշխիքներից են փոքր և միջին ձեռնարկությունները: Դրանք իրենց նշանակալի ազդեցությունն են թողնում երկրի տնտեսության գրեթե բոլոր ոլորտների վրա: ՓՄՁ-ների զարգացումը բերում է երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, ինչն էլ իր հերթին հանդիսանում է

երկրի տնտեսական աճի կայունության երաշխիք:

ՀՀ կառավարությունը՝ հաշվի առնելով փոքր և միջին ձեռնարկատիրության կարևորությունը երկրի սոցիալտնտեսական զարգացման գործում, ՓՄՁ ոլորտը ճանաչել է որպես երկրի տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը: Ուստի՝ հիմնվելով 2000 թ.-ին ընդունված «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վրա,

կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում ՓՄՁ-ին պետական աջակցության և դրա զարգացման անուղղությամբ: ՓՄՁ զարգացման քաղաքականության և ռազմավարության մշակման գործառնությունները վերապահված են ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը, որը հանդիսանում է նաև ՓՄՁ ոլորտի պետական աջակցության ծրագրերի մշակման համար պատասխանատու կառույցը: ՓՄՁ զարգացմանն ուղղված ռազմավարությունը մշակվում է հիմք ունենալով միջազգային փորձը, կատարվում է ռազմավարության իրականացման ընթացքի մոնիտորինգ և ՓՄՁ միջավայրի գնահատում՝ ըստ միջազգային ինդեքսների: Մասնավորապես 2012 թ.-ից սկսած ՀՀ-ն մասնակցում է Եվրոպայի «Փոքր Բիզնեսի Ակտի» գնահատմանը: Այն եվրոպական երկրներում հանդիսանում է փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնական փաստաթուղթը: «Փոքր բիզնեսի ակտը»՝ մշակված լինելով 2008 թ.-ին որպես ՓՄՁ խթանման գլխավոր գործիք, իրենից ներկայացնում է 10 հիմնական սկզբունքների համախումբ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել ՓՄՁ զարգացման քաղաքականություններ մշակելիս և իրականացնելիս: Դրանք են՝

- Ձեռնարկատիրության ուսումնառություն և կանանց ձեռներեցություն
- Մնանկացումը և երկրորդ հնարավորությունը ՓՄՁ-ների համար
- ՓՄՁ քաղաքականության մշակման կարգավորման դաշտ
- ՓՄՁ-ների համար գործառնական միջավայր
- ՓՄՁ-ների և սկսնակ ընկերությունների համար աջակցության մեխանիզմներ և պետական գնումներ
- ՓՄՁ-ների համար ֆինանսավորման հասանելիություն
- Ստանդարտներ և տեխնիկական կարգավորումներ
- Ձեռներեցության հմտություններ և ՓՄՁ-ների համար նորարարության քաղաքականություն
- ՓՄՁ-ները «կանաչ» տնտեսության մեջ
- ՓՄՁ-ների միջազգայնացում

Գնահատման շրջանակներում դիտարկվում է Եվրոպայի Փոքր բիզնեսի ակտի հիմնական սկզբունքների իրականացման առաջընթացը և չափվում է մոտարկվածությունը ԵՄ աշխատակարգերին ու ստանդարտներին: Ստացված գնահատականը մանրամասն տեղեկատվություն է տալիս ՓՄՁ քաղաքականության արդյունքների մասին և բարելավումներ է առաջարկում դրա բոլոր ուղղություններում: Ավելին, այն նախանշում է քաղաքականությունների և

աջակցության ծրագրերի մշակման, իրականացման, մոնիթորինգի և գնահատման ուժեղ և թույլ կողմերը՝ միաժամանակ համեմատելով տվյալ երկրի առաջընթացը նախորդ գնահատման արդյունքների համեմատ: 2012 թ.-ից սկսած հրապարակվել է գնահատման 3 զեկույց՝ 2012, 2016 և 2020 թվականներին, որոնք իրենցից ներկայացնում են Արևելյան գործընկեր (ԱԳ) 6 երկրների (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա) տնտեսական համատեքստի, բիզնես միջավայրի միտումների և ՓՄՁ հատվածի ընդհանուր ակնարկը:

2012 թվականի զեկույցում հրապարակված տվյալների հիման վրա ՏՀԶԿ կողմից Հայաստանի Հանրապետությանն առաջարկվել էին մի շարք առաջնահերթ գործողություններ: Մասնավորապես խորհուրդ էր տրվում ապահովել ձեռներեցության սիստեմատիկ ներառումը ֆորմալ, ոչ ֆորմալ կրթության և վերապատրաստման համակարգում, ինչպես նաև խթանել կանանց ձեռներեցությունը: Պետական գնումների գործընթացում թափանցիկություն ասպահովելու և խտրականությունը բացառելու նպատակով ԵՄ պետական գնումների ստանդարտներին մոտենալու անհրաժեշտություն էր նկատվել: Ընդհանուր առմամբ ցանկալի էր շարունակել իրավական և կարգավորումների դաշտի բարելավումը:

2016 թ.-ին հրապարակված զեկույցի համաձայն՝ ՀՀ կառավարությունը ՓՄՁ քաղաքականություն մշակելիս հաշվի էր առել վերոնշյալ առաջարկները, ինչի արդյունքում գրանցվել էր ցուցանիշների զգալի բարելավում: Արևելյան Գործընկերության անդամ 6 երկրների շարքում Հայաստանը 2012-2016 թթ. ժամանակահատվածում արձանագրել էր առավելագույն բարելավումը՝ հատկապես գործարար միջավայրի, ՓՄՁ աջակցման ծառայությունների և ֆինանսական միջոցների հասանելիություն ուղղություններում:

Չեկույցում ներկայացվել էին նաև Հայաստանյան ՓՄՁ-ների զարգացման հնարավորությունները և ռիսկերը: Երկրում առկա էր բավական զարգացած մարդկային կապիտալ (օրինակ՝ գիտության ոլորտում), կար արտահանման ան և լրացուցիչ տնտեսական կապերի հաստատման հնարավորություն (մասնավորապես՝ Եվրոմիության հետ): Նշվում էր նաև սփյուռքի պոտենցիալը, որը կարող էր օգտակար լինել օտարերկրյա ներդրողների հետ կապերի հաստատման գործում: Ռիսկերից առանձնացվել էին փոքր ներքին շուկան, դժվար աշխարհաքաղաքական իրավիճակը, զգալի կախվածությունը տարածաշրջանային գործընկերներից (արտահանման մեկ քառորդը ուղղվում էր Ռուսաստան) և ֆինանսական փոխանցումներ-

րից: Առանձնացվել էին նաև տնտեսության բավականաչափ մեծ ստվերային հատվածը, մրցակցության ցածր մակարդակը և մարզերի զարգացման ցածր տեմպը: 2016 թվականի զեկույցում առաջարկվել էր առավել ուշադրություն դարձնել ձեռներեցության հմտությունների, մշակույթի և կանաչ տեխնոլոգիաների զարգացմանը: Չնայած ձեռներեցության զարգացման տեմպերին և անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացմանը՝ հայաստանյան բիզնես միջավայրը շարունակում էր մնալ խոցելի՝ անկանխատեսելի տարածաշրջանային զարգացումների, ինչպես նաև արտահանումից ու օտարերկրյա փոխանցումներից կախվածության պատճառով:

2016 թ. գնահատումից հետո ՓԲԱ-ի գնահատման ենթաչափայիններում ներմուծվել են որոշակի փոփոխություններ: Մասնավորապես՝ ՓՄՁ-ների միջազգայնացումն ավելի լավ ներկայացնելու նպատակով ավելացվել են ՏՀՁԿ ցուցանիշների օգտագործմամբ առևտրի դյուրացման չափմանը և ՓՄՁ-ների կողմից էլեկտրոնային առևտրի օգտագործմանը վերաբերող ենթաչափայինները:

2020 թվականին հրապարակվել է Եվրոպայի փոքր բիզնեսի ակտի վերջին զեկույցը, որում ներկայացված տվյալների համար հիմք են հանդիսացել հիմնականում 2018 թվականին կատարված չափումները: Համաձայն այս զեկույցի Հայաստանը գրանցել է ցուցանիշների անկում գրեթե բոլոր ուղղություններում:

Աղյուսակ 1. ՓԲԱ գնահատման արդյունքները [6, էջ 10-12; 7, էջ 23-33; 8, էջ 50-61]:

| Ուղղություն | ՓԲԱ 2012 | | ՓԲԱ 2016 | | ՓԲԱ 2020 | | Փոփոխ. 2016-2020 | Փոփոխ. 2012-2020 |
|---|----------|---------|----------|---------|----------|---------|------------------|------------------|
| | ՀՀ դիրքը | Միա վոր | ՀՀ դիրքը | Միա վոր | ՀՀ դիրքը | Միա վոր | | |
| 1. Ձեռնարկատիրության ուսումնառություն և կանանց ձեռներեցություն | 3 | 2.4 | 1 | 4.0 | 5 | 2.8 | -1.1 | +0.4 |
| 2. Մանկացունք և երկրորդ հնարավորությունը ՓՄՁ-ների համար | 1 | 3.2 | 1 | 3.1 | 5 | 2.4 | -0.7 | -0.8 |
| 3. ՓՄՁ քաղաքականության մշակման կարգավորման դաշտ | 3 | 3.0 | 2 | 3.3 | 4 | 3.5 | +0.2 | +0.5 |
| 4. ՓՄՁ-ների համար գործառնական միջավայր | 4 | 3.6 | 2 | 4.0 | 4 | 3.8 | -0.2 | +0.2 |
| 5. ՓՄՁ-ների, սկսնակ ընկերությունների համար աջակցության մեխանիզմներ և պետական գնումներ | 3 | 2.7 | 2 | 3.7 | 3 | 3.6 | -0.1 | +0.9 |
| 6. ՓՄՁ-ների համար ֆինանսավորման հասանելիություն | 2 | 3.0 | 2 | 3.3 | 2 | 3.8 | +0.5 | +0.8 |
| 7. Ստանդարտներ և տեխնիկական կարգավորումներ | 5 | 2.4 | 3 | 3.3 | 6 | 2.6 | -0.7 | +0.2 |
| 8. Ձեռներեցության հմտություններ և նորարարության քաղաքականություն | 4 | 1.9 | 3 | 2.9 | 3 | 3.1 | +0.2 | +1.2 |
| 9. ՓՄՁ-ները «կանաչ» տնտեսությանմեջ | 3 | 2.6 | 2 | 2.7 | 5 | 2.4 | -0.3 | -0.2 |
| 10. ՓՄՁ-ների միջազգայնացում | 2 | 2.5 | 3 | 2.5 | 3 | 2.8 | +0.3 | +0.3 |

Աղյուսակում ամփոփված են վերոնշյալ 3 զեկույցների գնահատումը ըստ 10 հիմնական ցուցանիշների և դրանց համեմատությունը, որում պարզ երևում է գրանցված անկումը:

Այս փաստը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից են քաղաքական փոփոխությունները և տևական տնտեսական մարտահրավերները: Նախ հիմնական առևտրային գործընկերների տնտեսական ակտիվության

անկումով պայմանավորված 2016 թվականին Հայաստանում տիրում էր գրեթե լճացում համարվող իրավիճակ, սակայն աջակցային արտաքին միջավայրը և բարելավված ներքին տնտեսական հիմքերը խթանեցին մասնավոր սպառումը, ներդրումները և արտահանումը, ինչի շնորհիվ հնարավոր դարձավ աճի տեմպերի արագ վերականգնումը: 2017 թ. և 2018 թ. իրական ՀՆԱ-ի աճը կազմեց համապատասխան

նաբար՝ 7.5% և 5.2%: Ըստ զեկույցի՝ դրական տնտեսական հեռանկարները շարունակվում են պահպանվել՝ չնայած 2018 թ. արձանագրված 5.2% մի փոքր ցածր ՀՆԱ-ի աճի տեմպերին, ինչը պայմանավորված է հարկաբյուջետային քաղաքականության կոշտացմամբ և դրամական փոխանցումների ու օտարերկրյա ուղղակի ներդրումների ավելի դանդաղ մուտքերով: Այնուհանդերձ, Հայաստանի առջև դեռևս ծառայած են հիմնական սոցիալ-տնտեսական մարտահրավերները՝ կապված զգալի գործազրկության (17.7% 2018 թ.) և այն փաստի հետ, որ բնակչության մեկ քառորդը շարունակում է ապրել ազգային աղքատության գծից ցածր մակարդակի վրա, ինչը նպաստում է մեծածավալ արտագաղթին:

2014 թվականից ի վեր ապրանքների և ծառայությունների արտահանումը կայունորեն աճել է՝ 2017 թ. հասնելով ՀՆԱ-ի 37.3%-ին (2014 թ. 28.6%-ի համեմատ)՝ արձանագրելով արտահանման զամբյուղի դիվերսիֆիկացիայի որոշակի միտումներ. այսինքն, որպես ընդհանուր արտահանման տեսակարար կշիռ՝ տեքստիլ արտադրանքի արտահանումն աճել է՝ 2014 թ. 3%-ից 2017 թ. հասնելով 6%-ի: Հայաստանի տնտեսությունում գերիշխող տեղ են զբաղեցնում ծառայությունների, արդյունաբերության ու գյուղատնտեսության ճյուղերը, որոնց 2018 թ. բաժին է ընկել ՀՆԱ-ի՝ համապատասխանաբար 53.4%-ը, 16.48%-ը և 13.66%-ը: Կարևոր է նշել, որ տնտեսության այս ճյուղերին է բաժին ընկնում արտահանման գերակշիռ մասը. 2018 թվականին արտահանման 64.7%-ը կազմել է արյունաբերական, իսկ 29.1%-ը գյուղատնտեսական արտադրանքը: Իսկ ծառայությունները 2018 թվականի տվյալներով կազմում են ՀՀ արտահանման 44.2 %-ը:

Տեխնոլոգիական առաջընթացով պայմանավորված վերջին 20 տարում էականորեն աճել է ծառայությունների կշիռը համաշխարհային առևտրում: Ծնորհիվ բարձր տեխնոլոգիաների հնարավոր է դարձել մեծ տարածությունների վրա՝ առանց գնորդի և վաճառողի ֆիզիկական ներկայության, ծառայությունների մատուցումը: Տեխնոլոգիաները նվազեցնում են ծառայությունների առաքման ծախսերը՝ շնորհիվ գործարքային ծախսերի նվազեցման և լոգիստիկ ցանցերի բարելավման: Այս ամենի արդյունքում փոխվում է նաև արտահանվող ծառայությունների կառուցվածքը: Վերջին տարիներին նկատվում է ավանդական (տրանսպորտ, զբոսաշրջություն, շինարարություն, անձնական, մշակութային և ռեկրեացիոն) ծառայությունների մասնաբաժնի կրճատում և ժամանակակից (բարձր տեխնոլոգիական) ծառայությունների մասնաբաժնի ավելացում: Այս ճյուղում գործում են բազմաթիվ ՓՄՁ-ներ, որոնք մեծ դեր ունեն

ուորտի զարգացման գործում: ՓՄՁ-ների շնորհիվ տեղական հանքարդյունաբերության՝ որպես շուկայի վրա հենվելու փոխարեն Հայաստանը կարող է դառնալ հետազոտությունների, լուծումների և նախատիպերի մշակման կենտրոնացված փորձարարական լաբորատորիա: Մասնավորապես՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին անդրադառնալիս, կարևոր է նշել, որ լինի դա բիզնեսից՝ բիզնեսին (B2B) կամ բիզնեսից՝ հաճախորդին (B2C) լուծում, հայկական ծրագրային պրոդուկտների և լուծումների վերջնական օգտագործողների լայն բազան գտնվում է Հայաստանից դուրս: Կա մեծ մղում դեպի ԱՄՆ շուկաները և հաճախորդների բազաները: Այս փաստը հնարավորություն է ընձեռնում ՓՄՁ-ներին՝ օգտագործելով միայն մարդկային կապիտալը, մուտք գործել միջազգային շուկաներ և ներկայանալ մրցունակ արտադրանքով:

Արդյունաբերության ոլորտում արտահանողները կենտրոնացված են հիմնականում հանքանյութերի, մետաղների և նմանատիպ հումքի արտահանման մեջ, որոնց 2018 թ. բաժին է ընկել արտահանումների մոտ 40%-ը: Արտահանող կազմակերպությունների գերակշիռ մասը, եթե ոչ բոլորը, խոշոր կազմակերպություններ են, և այս գործընթացում ՓՄՁ-երի դերը կայանում է մեծամասամբ սպասարկում իրականացնելու մեջ՝ փոխադրում, միջնորդային ծառայություններ, ենթակառուցվածքների սպասարկում՝ վերանորոգում, ծրագրային սպասարկում, տեղեկատվական որոշ ծառայություններ և այլն:

Գյուղատնտեսության ոլորտում, ի տարբերություն արդյունաբերականի, ՓՄՁ-ների դերն ավելի մեծ է, քանի որ գյուղատնտեսական արտադրանքի հիմնական արտադրողները փոքր և միջին ֆերմաներն ու գյուղացիական տնտեսություններն են՝ նույնիսկ եթե բուն արտահանման գործընթացը կազմակերպվում է խոշոր արտահանողների կողմից: Այս ճյուղում ապրանքների բազմազանությունը և մշտական կայուն պահանջարկը հնարավորություն են տալիս ՓՄՁ-ներին մուտք գործել 'նիշային' շուկաներ, խուսափել ծանր մրցակցությունից, արագ ադապտացվել փոփոխություններին և ներկայանալ նոր առաջարկներով՝ յուրահատուկ կամ բնորոշ մթերքների տեսքով:

Կենտրոնացված են նաև նպատակային շուկաները՝ 2018 թ. արտահանման գրեթե մեկ քառորդը ուղղվել է դեպի Ռուսաստան: Ռուսաստանի հետ հարաբերությունները կարգավորվում են պետական պայմանագրերի և Եվրասիատնտեսական միության համաձայնագրի միջոցով: Իսկ այլ երկրների շուկա մուտք գործելը ՓՄՁ-երի համար, առանց պետական աջակցության, բարդ, երկարաժամկետ և

ծախսատար գործընթաց է, որի հաջողությունը հնարավոր չէ կանխատեսել՝ հաշվի առնելով աշխարհում առկա մրցակցությունը, պետությունների միջև հարաբերությունները, տրանսպորտային ու այլ ենթակառուցվածքային հարցերը, ապահովագրության երաշխիքները և այլ շատ կարևոր արտաքին գործոններ, որոնք ՓՄՁ-երի համար անհաջողության անիվներ են:

Բացի այդ, տնտեսություն դրամական ներհոսքի զգալի մասը կազմում են անհատույց տրանսֆերտները այլ երկրներից, որոնք 2017 թ. կազմել են ՀՆԱ-ի 13%-ը, և որոնց մոտ 64%-ը գալիս է Ռուսաստանից: Տրանսֆերտների գերակշիռ մասը ուղղվում է ընթացիկ սպառմանը և ազդում ՓՄՁ-ների տնտեսական ակտիվության վրա (ինչպես նշվեց, ՀՀ-ում ՓՄՁ-ները հիմնականում ապահովում են երկրի ներքին սպառման ու սպասարկման պահանջարկը): Նման կախվածության արդյունքում Հայաստանի տնտեսությունում արտացոլվում են արտաքին ցնցումները, ինչպիսիք են՝ Ռուսաստանում ապրանքների գների փոփոխականությունը և տնտեսական ակտիվության նվազումը:

Ինչպես հայտնի է, Հայաստանի տնտեսությունը մշտապես արտարժույթային ռիսկ կրող է, քանի որ ներմուծող երկրի կարգավիճակ ունի: ՓՄՁ-ների համար ներմուծման թանկացումը՝ պայմանավորված փոխարժեքային տատանումներով, ուղղակիորեն բերում է առաջարկվող ապրանքների և ծառայությունների ինֆլյացիայի՝ հետևաբար պահանջարկի տատանման:

Չնայած 2009 թվականից հետո արձանագրված նվազեցման միտումներին՝ Հայաստանում արտաքին առևտրային հաշիվը շարունակում է մնալ բացասական: 2009 թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամով պայմանավորված կտրուկ անկումից հետո ՕՈՒՆ-ի գուտ ներհոսքերը շարունակում են նվազել՝ սահմանափակելով տնտեսական աճի հետագա հնարավորությունները: 2018 թ. ՕՈՒՆ-ի գուտ ներհոսքերը կազմել են ՀՆԱ-ի 2%-ը, ինչը բավականին ցածր է 2009 թ. արձանագրված 8.1%-ից: Միևնույն ժամանակ 2018 թ. նոր հարկային օրենսգիրքը և հարկային վարչարարության բարելավմանն ուղղված վերսկսված ջանքերն օգնեցին նվազեցնել հարկաբյուջետային դեֆիցիտը՝ այն հասցնելով 1.6%-ի: ՀՀ կենտրոնական բանկն աստիճանաբար նվազեցրել է իր վերաֆինանսավորման դրույքաչափը, ինչը նպաստել է մասնավոր հատվածին տրվող ներքին վարկերին 2019 թ. փետրվարին խորհրդարանն ընդունեց տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը, որում առաջնահերթություն է տրվում կոռուպցիայի դեմ պայքարին և բիզնես միջավայրի բարելավմանը՝ հատկապես ՕՈՒՆ-ի

ներգրավման և արտահանման խթանման միջոցով:

Առաջացած խնդիրները հաղթահարելու նպատակով ՏՀԶԿ կողմից ՀՀ-ին առաջարկվել է ՓՄՁ քաղաքականություն մշակելիս խթանել գործունեության հավասար դաշտ բոլորի ձեռնարկությունների համար, հզորացնել ինստիտուցիոնալ և կարգավորման դաշտը, և գործառնական միջավայրը ՓՄՁ-ների համար, դյուրացնել ՓՄՁ-ների ֆինանսավորման հասանելիությունը, աջակցել ՓՄՁ-ների մուտքը շուկաներ և բարձրացնել ՓՄՁ-ների մրցունակությունը:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ Հայաստանյան շուկան փոքր է և զգայուն արտաքին ցնցումների նկատմամբ, իսկ աշխարհագրական դիրքը լրացուցիչ խնդիրների պատճառ է հանդիսանում, ուստի երկրի տնտեսական քաղաքականության համար առանցքային են հանդիսանում մրցունակության բարձրացումը և արտահանման խթանումը: 2018 թ. Հայաստանում տեղի ունեցան նշանակալի քաղաքական փոփոխություններ, որոնք հանգեցրեցին նոր խորհրդարանի ընտրությանը և նոր կառավարության ձևավորմանը: Նոր կառավարությունը առաջարկեց բարեփոխումների օրակարգ՝ նպատակաուղղված կոռուպցիայի դեմ պայքարին, դատական համակարգի արդյունավետության և անկախության բարելավմանը, և ներդրումներ ներգրավելու և ձեռնարկատիրության զարգացման նպատակով ընդհանուր գործարար մթնոլորտի բարելավմանը: Փոթորկալից քաղաքական անցումը և նախարարությունների ու պետական գերատեսչությունների վերակազմավորման ընթացիկ գործընթացները բացասական ազդեցություն են ունեցել Հայաստանի կատարողականի վրա ՓԲԱ-ի գնահատման այս փուլում:

Չեկույցի վիճակագրությունը ցույց է տալիս, որ նույնիսկ երբ ցուցանիշները անկում են ապրում, ՓՄՁ-ների կողմից ծառայությունների մատուցման ոլորտը շարունակում է մեծացնել իր մասնաբաժինը: Այս օրինաչափությունից ելնելով կարելի է աներկբա առաջարկել ՓՄՁ ոլորտի ուշադրությունը ուղղել ծառայությունների արտադրություն և սպասարկման ապահովման ոլորտ: Այստեղ խոսքը ինչպես ավանդական ծառայությունների տեսակների մասին է՝ բժշկություն, տուրիզմ, այնպես էլ 21-րդ դարի նորարարական ծառայությունների՝ տեղեկությունների մշակում, բարձր տեխնոլոգիաների արտադրություն, գործարկում և սպասարկում, էլեկտրոնային բազաների ստեղծում և այն ամենը՝ ինչում մարդկային մտավոր կապիտալը առավելագույնս կիրացվի և կրերի ֆինանսական կապիտալի ներհոսքի: Մեր երկրի սակավ ռեսուրսների համեմատությամբ, երկրում առկա մարդկային կապիտալը իր որակով, արտա-

որողականությամբ և քանակով կարող է ՓՄՁ-ներին տալ արագ և շարունակական ան թե ֆինանսական հոսքերում, թե արտահանման ծավալներում: Մեր կողմից առաջարկվող ՓՄՁ զարգացման և հիմնախնդիրների լուծման կարևոր բանալին թերևս ՓՄՁ-ների՝ նպատակային ոլորտներում գործունեություն ծավալելն է: Իսկ նպատակային ոլորտները՝ դրանք բժշկությունը, բարձր տեխնոլոգիաներ և գրոսաշրջությունն են:

Նկատենք նաև, որ զեկույցում դեռ ներառված չեն 2020 թվականին գլոխ բարձրացրած COVID-19 համավարակի, ինչպես նաև Արցախյան երրորդ պատերազմի սոցիալ-տնտեսական հետևանքները ցուցանիշների վրա: Այս իրադարձությունների ազդեցությունը ամենայն հավանականությամբ ակնառու կլինեն 2024 թվականին հրապարակվելիք զեկույցում: Պետք է նաև ուշադրություն դարձնել, և հավանաբար ապագա հրապարակվելիք զեկույցում էլ աչքի կընկնի բարձր տեխնոլոգիաների և բժշկության ոլորտների դերի զգալի ավելացումը, որտեղ ՓՄՁ-ները հայտնվեցին շահեկան իրավիճակում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Asian Development Bank, Annual Report 2019
2. Economist Intelligence Unit, Annual Report 2019
3. World Integrated Trade Solution, Report 2019
4. The World Bank, Armenia: Commitments by Fiscal Year 2019, <https://pubdocs.worldbank.org/en/231381587037432221/Armenia-Project-Pagers-April-2020.pdf>
5. UN Comtrade/ International Trade Statistics Database, Report 2019:
6. Organisation for Economic Co-operation and Development, European Small Business Act 2012
7. Organisation for Economic Co-operation and Development, European Small Business Act 2016
8. Organisation for Economic Co-operation and Development, European Small Business Act 2020
9. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, ՎԿ-ի ազգային հաշիվների առցանց տվյալների բազա (տարեկան), <https://www.armstat.am/am/?nid=202>
10. ՀՀ մաքսային ծառայություն, ՀՀ արտահանման և ներմուծման կառուցվածքը արտաքին և փոխադարձ առևտրում (2017-2018 թթ.):
11. ՀՀ Կառավարություն, Կառավարության որոշումը փոքր եվ միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2011 թվականի ծրագիրը հաստատելու մասին:

Շժանա/Հանձնվել է՝ 30.08.2021

Рецензирована/Գրախոսվել է՝ 13.09.2021

Принята/Ընդունվել է՝ 20.06.2021